

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՈՆԵՑԻ, Յաղագս Բերականգն, բնագիրը հրատարակության պատրաստեց  
 Լ. Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակ-  
 ություն, Երևան, 1977, 226 էջ:

Մատենադարանը՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին  
 .ձեռագրերի ինստիտուտը, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է գրել XIV դարի լա-  
 տինարան քերական, նշանավոր գրագետ ու գործիչ Հովհաննես Քոնեցու «Համառոտ հաւաքումն  
 յաղագս քերականին» ուղագրով և հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար խիստ  
 օգտակար ձեռագիրը:

Աշխատությանը կցված է ընդարձակ ներածություն, որի առաջին մասում՝ «Քոնեցի հոգե-  
 վոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը» խորագրի  
 տակ ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ և երկրորդ անգամ Խաչիկյանը համառոտ, բայց ամբողջական պատկերա-  
 ցում է տալիս ընթերցողներին Քոնեցի հոգևոր ու մշակութային կենտրոնի և Քոնեցու գիտա-  
 կան գործունեության, Հայաստանում ունիթոսական շարժման ծագման, ունիթոսների ծավալած  
 գիտական գործունեության մասին:

Իրավացի է Լ. Խաչիկյանը, երբ դատապարտելով ունիթոսների աղագրով գործունեություն-  
 նը, հայոց եկեղեցին հոսմեական եկեղեցուն միավորելու (այստեղից էլ՝ միաբաբական անվա-  
 նումը) նրանց ծրագիրը համարելով հայակործան, գտնում է, որ պիտի լուրջ ուշադրություն  
 դարձնել նրանց գիտական ժառանգության գնահատման և ուսումնասիրության վրա, գիտական  
 շրջանառության մեջ գնել նրանց իմաստասիրական, բնագիտական, պատմագրական, քերակա-  
 նագիտական աշխատությունները, որոնք հայ ժողովրդին իրագեկ էին դարձնում նաև անտիկ  
 մշակույթին ու գիտությանը: Այնուհետև Խաչիկյանը համառոտ ներկայացնում է այն ուղիները,  
 որոնցով եվրոպական գիտական միտքը թափանցում էր Հայաստան և խթանում՝ գիտության  
 հետագա զարգացմանը: Այդ ուղիներից մեկն էլ ունիթոսների գիտական աշխատություններն  
 էին և թարգմանությունները: Առանձնապես կարևոր էին ունիթոսների առաջնորդ, Մարաղայի  
 եպիսկոպոս Բարթողիմեոսի գիտական աշխատություններն ու թարգմանությունները, հատկա-  
 պես «Ծաղագս վեցօրեայ արարչութեան» գործը:

Համառոտակի ներկայացնելով Քոնեցու հասարակական գործունեությունը, ընդգծելով նրա  
 մնասկար հետևանքը հայ ժողովրդի համար, ներածականի հեղինակը, իրավացիորեն, դրվա-  
 տանքի խոսք է ասում նրա քերականության մասին՝ այն համարելով հայոց լեզվի առաջին  
 գիտական քերականությունը, որով Քոնեցին հայ քերականական միտքը թրակացու ավանդա-  
 կան արահետից մալուղի դուրս բերեց: Հիշյալ քերականության արժանիքներից մեկն էլ  
 Լ. Խաչիկյանը համարում է այն փաստը, որ Քոնեցին լիև աշխատությունը շարագրել է գրա-  
 բար, բայց ուսումնասիրության նյութը միջին հայերենն է, օրինակները միջին հայերենից են,  
 որը հարուստ նյութ է տալիս միջին հայերենն ուսումնասիրողներին:

Ներածության Էրկրորդ մասը՝ «Հովհաննես Քոնեցու «Համառոտ հաւաքումն յաղագս քե-  
 րականին» երկի քերականագիտական նշանակությունը» խորագրով, գրել է զոցենտ Սուրեն  
 Ավագյանը: Սա մի բնագրագիտական-քերականագիտական մանրակրկիտ ուսումնասիրություն է,  
 ուր Ս. Ավագյանը, Քոնեցու քերականությունը համեմատելով V—XIV դդ. հրապարակի վրա  
 եղած քերականությունների հետ, գալիս է այն համոզիչ եզրակացության, որ Քոնեցին, օգտա-  
 գործելով հատկապես ուլ միջնադարի հայ քերականների (Վարդան Արևելցի, Հովհաննես  
 Երզնկացի, Նսայի Նշեցի) և լատին քերական Պրիսցիանոսի ու Դիսկուսի աշխատությունները՝  
 կարողացել է ազատվել թրակացու (հունարանության) ազդեցությունից և ստեղծել մի որակա-  
 պես նոր աշխատություն: Լինելով իր ժամանակի հմուտ քերականագետներից մեկը՝ Քոնեցին  
 քերականությունը գիտում է իրրև առանձին, ինքնուրույն լեզվաբանական գիտություն, տեսա-  
 կան ուսմունք և ոչ թե մտքերը շարագրելուն սոսկ հմտություն տվող գիտելիք: Այս սկզբունքով

և, նա իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է աշխատության առաջին երեք մասերի՝ Նյունարանության, ձևաբանության և շարահյուսության վրա՝ առոգանության, տաղաչափության և վերօտոսության հարցերը համարելով երկրորդական:

Գիտական սանրակրկիտ համեմատական ուսումնասիրությանը Ս. Ավագյանը ցույց է տալիս, որ Քոնեցին ներկայացնելով հայոց լեզուն՝ դրից մինչև նախադասություն, հանդես է բերում ինքնուրույն մոտեցում: Օրինակ՝ առաջին անգամ նրա գրքում ենք հանդիպում հոլովման կարգին, նա է հոլովը և հոլովումը զատում իրարից՝ ընդունելով վեց հոլով և 7 հոլովում: Ընդունում է բայերի երկու խումբ անձնական (դիմավոր) և անանձնական (անդեմ), կանոնավոր և անկանոն բայեր, բացատրում է նրանց սեռը, հոլովառությունը, դերանունների տեսակները՝ ստեղծելով քերականական հարուստ տերմինաբանություն:

Ընդգծելով այն մեծ արժանիքը, որ Քոնեցու քերականության մեջ է առաջին անգամ, իբրև առանձին բաժին, քննվում հայերենի շարահյուսությունը, Ս. Ավագյանը հանգամանորեն ներկայացնում է այս աշխատության մեջ արծարծված շարահյուսական այն հարցերը, որոնք քննված են Պրիսցիանոսի, Դիսկուսի, Բարդուղիմեոսի քերականական սկզբունքների լույսի տակ:

Հայերենի շարահյուսությունը Քոնեցին ներկայացնում է «Յաղագս գիտութեան բաղադրելոց, այսինքն բանին» և «Յաղագս շարամանութեանց» խորագրերով: Նախադասությունը այս գրքում հանդիպում ենք բան կամ լարմար շարակարգաբան անվանմամբ. ընդ որում, ընդունված են բանի երկու տեսակ՝ կատարելա (մարդ ընթանա) և անկատար (մարդ սպիտակ): Քոնեցին նույնպես ընդունում է, որ կատարյալ բանը (իմա՝ նախադասությունը) դիմավոր բաղով է կազմվում: Քննում է հայերենի ոչ բայական բառակապակցությունները (շարակարգութիւն) և բայական բառակապակցությունները (շարամանութիւն): Ներկայացված են կատարելա շարամանության կամ բանի (նախադասության) տեսակներն ըստ բայի եղանակների, զգացական, կամային նախադասություններ. ցուցակվան՝ «Սոկրատէս ընթեռնու», հրամայական՝ «Սոկրատէս, ընթեռնիր», ըզծական՝ «Եղ և երանի թե ընթեռնիր», ստորադասական՝ «Յորժամ ընթեռնու լիցի Սոկրատէս», անբերելի՝ «Սոկրատա ընթեռնուլն է ճշմարիտ»: Տալիս է նախադասության տեսակներն ըստ կազմության՝ պարզ և բարդ՝ պարզ բան, բաղադրյալ բան անվանումներով: Հիմք ընդունելով նախադասության հիմնական անդամի՝ դիմավոր բայի սեռը՝ Քոնեցին հիշատակում է նախադասության երեք տեսակի կառուցվածք՝ անցողական («Պետրոս ընթեռնու զԾասիկն»), ոչ անցողական («Սոկրատէս ընթեռնու») և անդրըջական («Դու կու սիրես զքեզ»): Անցողական կառուցվածքում նշվում են նաև կրավորական կառուցվածքի նախադասությունները («զԾասիկն ընթեռնու լիցի ի Պետրոսէ»): Անդրադառնալով նախադասության գլխավոր անդամներին՝ ենթական ներկայացնում է ենթադրելալ, իսկ ստորոգյալը՝ մակադրյալ անվանումներով, նշում նրանց համաձայնությունը և շարահյուսությունը: Քոնեցին կարևոր տեղ է հատկացնում նաև հոլովների կիրառություններին, խնդրառությունը՝ կապված բայի սեռի հետ: «Յաղագս շարամանութեանց» մասի շրկորդ հատվածում քննվում են ձևական շարամանությունների կապակցության եղանակները հայերենում:

Ներածականում Ս. Ավագյանը ցույց է տալիս, թե Քոնեցուց հետո եկող լատինարան քերականությունները ներկայացուցիչները՝ Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Ոսկան Երևանցի, Սիմեոն Զուշայեցի և ուրիշներ, որքանով են օգտագործել խնդրո առարկա քերականությունը, նրա սկզբունքները:

Միանգամայն իրավացի է Ս. Ավագյանը, երբ բնութագրելով Քոնեցու քերականությունը հունա-լատինատիպ անվանմամբ, ընդգծում է, որ հունա-լատինատիպ քերականությունների առաջացումը պիտի վերագրել XIV—XV դդ. և ոչ թե՛ XVII—XVIII: Պատմականորեն էլ պատճառաբանված է լատինարանության սկսված լինելը XIV—XV դդ., քանի որ միարարական շարժման, ունիթոնների գործունեության հետ է կապվում այն:

Քոնեցու «Յաղագս քերականին» հրատարակված է խնամքով մշակվելուց, բնագրական համեմատական քննությունից հետո՝ համապատասխան բնագրական նշումներով (ուղղագրական, բնագրական տարբերակներ), ունի Քոնեցու օգտագործած քերականական տերմինների ցանկ:

Գիրքը լավ նվեր է հայերենագիտությունն ու հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրողներին:

ՍԻՐԱՔ ԳՅՈՒԼՈՒԴԱՂՅԱՆ  
Բաճաթիբական գիտությունների դոկտոր